

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ
ԾՐԱԳՐԻ /ԱՅԴ ԹՎՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ/
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

ք. Կապան

07 հոկտեմբեր 2022թ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն 2022 թվականի հոկտեմբերի 07-ին, ժամը 15:00-ին, Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Կապան համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի /այդ թվում՝ 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի/ հանրային քննարկումը: Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է:

Քննարկումը վարում էր Կապանի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գոռ Թադևոսյանը, ով հանդես եկավ բացման խոսքով և ծրագիրը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց համայնքապետարանի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի պետ Հասմիկ Ղոնյանին և ֆինանսական բաժնի պետ Իվետա Թադևոսյանին:

Զեկուցողների կողմից ներկայացվեց միջնաժամկետ ծախսերի ծրագրի առանձնահատկությունները, մեթոդական ուղեցույցով և օրենսդրությամբ ներկայացված պահանջները, կազմման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, համայնքի առաջնահերթությունները, գերակայությունները և ծախսային գործոնները միջնաժամկետ ժամանակահատվածում և այլն:

Տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի պետ Հասմիկ Ղոնյանն առանձին ներկայացրեց միջնաժամկետ ծախսերի ծրագրում ներառված՝ 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերը: Նշվեց, որ համայնքը 2023 թվականին սուբվենցիոն ծրագրերով նախատեսում է իրականացնել մի շարք ծրագրեր՝ այդ թվում համայնքապետարանի շենքի վերակառուցում, հասարակական շենքերի /ակումբ գրադարան, հանդիսությունների սրահ, գրասենյակ, տուն-թանգարան, վարչական շենք/ նորոգում և կառուցում, ՆՈՒՀ-երի նորոգում և տարածքի բարեկարգում, ճանապարհների, մայթերի, բակերի և փողոցների նորոգում և ասֆալտապատում, ջրագծերի նորոգում, հեռագնա արոտների ճանապարհների բարելավում և լուսավորության համակարգի կառուցում: Զեկուցողը

տեղեկացրեց նաև, որ նախատեսված ծրագրերի մի մասը հնարավոր է դուրս մնան 2023 թվականի սուրվենցիոն ծրագրերից, քանի որ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննությունների համար բավարար ժամանակ չի հատկացվել և մինչև ամբողջական փաթեթների ներկայացման վերջնաժամկետը՝ նոյեմբերի 25-ը, հնարավոր է նախագծանախահաշվային փաստաթղթերը և անհրաժեշտ փորձաքննություններն առկա չլինեն: Նշվեց, որ նախահաշվային արժեքներից է կախված նաև վերջնական ծրագրերի ընտրությունը, քանի որ պետք է ապահովվի համայնքի համաներդրման չափը:

Ներկայացված աշխատանքները հավանության արժանացան մասնակիցների կողմից, ովքեր դրական գնահատեցին մեծաձավալ աշխատանքների նախատեսումը:

Նիստը վարողը քննարկումն ամփոփելուց շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության համար:

Նիստը վարող

Արձանագրող

07 հոկտեմբեր 2022թ



